Մկրտության իմ ուխտը

Ուխտը խոստում է, որը մենք կապում ենք Երկնային Հոր հետ: Կարդացեք երեք քայլերի մասին, որոնք մենք խոստանում ենք կատարել, երբ մկրտվում ենք: Այնուհետև գրեք, թե ինչ կարող եք անել ձեր մկրտության ուխտը պահելու համար:

Միշտ հիշել Հիսուս Քրիստոսին

Երբ Ելենան տեսավ ուրիշների վատ վերաբերմունքը մեկի հանդեպ, նա մտածեց, թե ինչ կաներ Հիսուսը:

Ես ինչպե՞ս կարող եմ հիշել Հիսուսին .

«Միշտ հիշել նրան» (Մորոնի 4 .3):

Պահել նրա պատվիրանները

Ջեյմսը նախընտրեց չդիտել վատ խոսքերով ու նկարներով տեսանյութ:

Պատվիրան, որը ես կարող եմ պահել .

«Պահել նրա պատվիրանները» (Մորոնի 4 .3):

Ձեզ վրա վերցրեք Նրա անունը

Նանան ասաց իր ընկերներին, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ է:

Ինձ համար ի՞նչ է նշանակում Նրա անունը մեզ վրա վերցնել.

«[Ձեզ] վրա վերցնել անունը [Հիսուս Քրիստոսի]» (Մորոնի 4 .3):

ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵՄ ԻՄ ՈՒԽՏԸ

Ահա ևս մի քանի եղանակ, թե ինչպես կարող եք պահել ձեր մկրտության ուխտը:

Օգնեք մարդկանց

Ակիոն օգնեց իր կրտսեր եղբորը կատարել մաթեմատիկայի տնային աշխատանքը:

Ես ո՞ւմ կարող եմ օգնել .

«Կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն» (Մոսիա 18.8):

Ապաշխարել, երբ սխալ եք գործում



Երբ Իսան չար խոսք ասաց իր քրոջը, նա աղոթեց Երկնային Հորը: Հետո նա խնդրեց քրոջը ներել իրեն:

Ես ինչպե՞ս կարող եմ ապաշխարել .

«Ապաշխարեք և վերստին ծնվեք» (Ալմա 5 .49):

Մխիթարել ուրիշներին

Լուկասը այցելեց իր ընկերոջը, որի պապը մահացել էր:

Ես ինչպե՞ս կարող եմ մխիթարել ինչ-որ մեկին .

«Մխիթարե[ք] նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության» (Մոսիա 18 .9):

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋԵԼԻՆ ՍՄԻԹԻ

ՁԵՐ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ձեր մկրտությունից հետո քահանայությունը կրողը իր ձեռքերը կդնի ձեր գլխին:

Նա ձեզ կհաստատի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ և կօրհնի ձեզ Սուրբ Հոգու պարգևը ստանալու համար (տես Վարդապետություն և Ուխտեր 33 . 15):

ԻՆՉ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ ՁԵԶ ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐԸ

Երբ մենք մկրտվում ենք և հաստատվում, Երկնային Հայրը խոստանում է մեզ, որ մենք Նրա Հոգին միշտ մեզ հետ կունենանք: Սուրբ Հոգին օգնում է մեզ զգալ Աստծո սերը, մխիթարությունը և խաղաղությունը: Նա նաև օգնում է մեզ ներված զգալ, երբ ապաշխարում ենք:

Դուք կարող եք ավելին իմանալ ձեր մկրտության ուխտի մասին՝ լսելով հաղորդության աղոթքները ամեն շաբաթ (տես Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79):